ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԲԱՌԱՐԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

Ա

ԱԶԴԱՐԱՐ — Ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ մարմնի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար:

ԱՆԱՆՈՒՆ ՎԿԱ – Վկա է, որի ինքնությունը չի բացահայտվում մեղադրանքի կողմից կամ հանրությանն ընդհանրապես:

ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ — Կազմակերպված հանցավոր խմբերի հանցավոր գործունեություն է, եթե.

1. այն կատարվել է մեկից ավելի պետություններում.
2. այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում.
3. այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում, կամ

4 այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, իսկ դատարանից պահանջվում է առաջ քաշել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին հերքելի կանխավարկած:

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ — «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ — Գույք է, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները):

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ — Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ է, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ — Ազդարարի կողմից կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ իրավասու մարմին հաղորդման ներկայացումն է:

Բ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ — Բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկություններն են, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական դիզայնի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

ԲԱՐԵԽԻՂՃ ԵՐՐՈՐԴ ԱՆՁ — Այն անձն է, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա:

ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ — իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձնական շահի հրապարակման պարտավորությունն է իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչների, ինչպես նաև շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

Գ

ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ — Հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:

Ց

ՁԳԱԼԻՈՐԵՆ ՊԱՍԻՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ — Իշխանության ներկայացուցիչների կողմից որոշակի գործողությունների իրականացումն է օբյեկտիվ կասկածներ ունենալու դեպքում առ այն, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված էր հանցագործություն կատարել, ինչպես նաև առանց անձին հանցանք կատարմանը հրահրելու գործողությունները:

Թ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ — Հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության և այդ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումն է իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչների կողմից:

ԹՈՂՏՎՈՒԹՅՈՒՆ — Անձի կողմից մեկ այլ անձի ծառայողական գործունեության բացթողումների կամ խախտումների համար միջոցներ չձեռնարկելն է, ոչ իրավաչափ գործողություններին չարձագանքելը:

Ի

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ — Ֆիզիկական անձ է, որի անունից, օգտին կամ որի հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, որը վերահսկում է կամ վերահսկել է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, որի անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը):

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ — Ցանկացած իրավաբանական անձ է, որը նման կարգավիճակ ունի կիրառելի ներպետական իրավունքի համաձայն՝ բացառությամբ պետությունների կամ այլ պետական լիազորություններ իրականացնող մարմինների և միջազգային հանրային կազմակերպությունների:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Իրավաբանական փաստերից բխող դատողություն մեկ այլ իրավաբանական փաստի մասին:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ — Սկզբունք է, համաձայն որի բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, ապահովված է իշխանությունների լիարժեք բաժանումը, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումն է:

Կ

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ – Ներառում է ինչպես ակտիվ (կաշառք տալ), այնպես էլ պասիվ կաշառակերությունը (կաշառք ստանալ), այդ թվում՝ կաշառք ստանալու/տալու միջնորդությունը:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ — Կոռուպցիոն վարքագիծ է, որը դրսևորվում է կաշառք տալով:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՍԻՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ — Կոռուպցիոն վարքագիծ է, որը դրսևորվում է կաշառք ստանալով:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔ — Գործարք կամ գործարար հարաբերություն, որի դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, լիազոր մարմնի ուղեցույցներով, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված կամ այլ դեպքերում կասկածվում է, կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

ԿՈՌՈՒՊՑԻԱ — Անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 1 հավելվածով նախատեսված հանցագործություններն են:

Հ

ՀԱԿԱԿՇՌՈՂ ԲԱՎԱՐԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐ — Հակընդդեմ հարցման իրավունքի բացակայությունն է հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՑՄԱՆ (ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱՅԻ) ԻՐԱՎՈՒՆՔ — Անձի՝ իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունքն է:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՆՁ — Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձն է կամ ցանկացած անձ, որը դատապարտվել է հանցավոր համագործակցության կամ ցանկացած այլ տեսակի հանցավոր միավորման մասնակցելու կամ կազմակերպված հանցավորության համար, բայց ով համաձայնվել է համագործակցել քրեական արդարադատության մարմինների հետ՝ հանցավոր համագործակցության կամ հանցավոր միավորման կամ կազմակերպված հանցավորության հետ առնչվող կամ այլ ծանր հանցանքների մասին ցուցմունքներ տալու եղանակով:

ՀԱՄՈԶԻՉ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, մեղադրյալը՝ ներկայացնել գույքի՝ օրինական աղբյուրներից ծագելու վերաբերյալ որոշակի ապացույցներ և համոզել դատարանին, որ գույքն իրավամբ ծագում է օրինական աղբյուրներից, իսկ դատարանից պահանջվում է եզրահանգում անել համապատասխան գույքի ոչ օրինական ծագման մասին, եթե մեղադրյալը չի ապացուցել հակառակը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ԱՌԱՁՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ — Իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից: Անթույլատրելի է լիազորությունների օգտագործումն իրենց, իրենց ընտանիքների կամ մերձավորների համար չարդարացված նյութական կամ ոչ նյութական օգուտներ կամ առավելություններ ստանալու համար:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏ — Հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է նաև քրեական օրենսգրքի Հատուկ մասով սահմանված, սուբյեկտին ներկայացվող լրացուցիչ հատկանիշներով:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱԴՐԱՆՔ (ՊՐՈՎՈԿԱՑԻԱ), ԹԱԿԱՐԴՈՒՄ — Իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ են, որոնք

դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ — Ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը:

ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ — Անձի համար տարբեր բարենպաստ պայմանների չհիմնավորված ստեղծումն է:

Մ

ՄԻԱԿ ԿԱՄ ՎՃՌՈՐՈՇ ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔ — Ամբաստանյալի դատապարտումն է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց անձը չի կարողացել հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում:

Ն

ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ — Ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդման ներկայացումն է:

Շ

ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ԴՐԴՈՒՄ — Իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղումն է:

Պ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, իսկ դատարանը հայեցողական լիազորություն ունի եզրահանգում անել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին:

Վ

ՎԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ — Վկայի պաշտպանության ընդհանուր և անհատական միջոցառումների համակարգ է:

Փ

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ — Անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ — Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումն է (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ — Կոռուպցիայից զերծ հասարակություն ունենալու կարևորության գիտակցումն է պետական իշխանության բոլոր ՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կողմից և նրանց արդյունավետ համագործակցությունն է՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումն ապահովելու համար:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԻԹ — Օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ — Հանցագործության մասին հաղորդման մեջ առկա կամ դրա ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն են հանցագործության առերևույթ հատկանիշների վերաբերյալ: